

Կոմիտաս Հայոց պատմութեան հայոց մատուցութեան 11.18.10

L. ՄԵԼԻՔՍՅԵ-ԲԵԿ

ԶՈՐՈՐՈՇ ՀԱՅՔԻ 774—775 Թ. Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾՈՒՐՁԸ

Առանձնատիպ Հայկական ՍՍԸ Գիտությունների
Ակադեմիայի 1948 թ. № 2 «Տեղեկագրից»



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԵՏԱԿԱՆ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ ЕКБՏՀԵՍՏ

Հասարակական գիտություններ 1948 թ., №

Общественные науки
Библиотека

Հ. Բ. և Ի. Ի. ԽՍԻՆՅԱՆ

ՀԵՐԱԳՈՒՅՔ և ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ ՊՈՆՏԻԿԱՆԻ

ԴՐԱ
32/2

Լ. ՄԻԼԻՔԻՆԵՐ-ԲԵԿԻ

ԶՈՐՈՐՈՐԴ ՀԱՅՔԻ 774-775 թ.թ. ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ԱՊԱՏԱՄՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ¹

Հայաստանի բաժանումը Մեծ և Փոքր Հայքի՝ համապատասխան նոտանգներով և գավառներով այնպես, ինչպես այն պատկերացրած է VII դարի անանուն հեղինակի (Անանիա Շիրակացու) «Աշխարհացույց»-ի մեջ, անկասկած, արտացոլում է Հայաստանի ուեալ իրականությունը ոչ թե նույն VII դարի, այլ ավելի հին ժամանակաշրջանի՝ terminus a quo և դ. մերթվ. առաջ և terminus ad quem VI դ. մերթվ. հետո:

Այս բաժանումը, ինչպես հայտնի է, ներկայացնում է Մեծ Հայքի իրեն 15 նահանգից բաղկացած մի երկիր, որոնց թվում հիշվում է երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայքը:

Սակայն այդ Չորրորդ Հայքը, իրեն Սովոց աշխարհի լոկ մի զավառ, երբեմն Մեծ Հայքի մեջ էր մտնում և երբեմն Փոքր Հայքի մեջ:

Իսկ Փոքր Հայքը անտիկ դարերի և ոչ միջին դարերի ըմբռնումով (երբ նրա ներքո կիլիկիան էր հասկացվում) երկար ժամանակ մտնում էր նախ՝ մինչև IV-V դ. դ. Արևելյան Հոռոմեական կայսրության մեջ, իսկ հետո՝ V դ. սկսած՝ Բյուզանդիայի սահմաններում: Եվ այդ՝ Փոքր Հայքի՝ գավառի ստորաբաժանումը հիտևանք էր, ինչպես հայտնի է, Հոռոմեակայսեր վարչական ուժորմի, որն իր արտահայտությունն է գտնել XXXI նովելլայում «De dispositione quattor administrationum Armenae»² 536 թ. 17 ապրիլյան կալենդի, այսինքն՝ 18 մարտի, թվահամարով³:

Զնայած, սակայն, այսպիսի անվիճելի ճշմարտության, Սովուս Խորենացին իր «Պատմություն Հայոց»-ի մեջ (1, 14) Փոքր Հայքի գավառի ստորաբաժանումը առասպելական Արամին՝ է վերագրում:

«Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զիսօս և զլեզուն հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւթեալ պարսպիալ որմովք, անուանէին հինք աշխարհին Մաթաք, որպէս ու

¹ Զեկուցված է Թբիլիսի Ստայինի անվան պետական համալսարանի Հայկաբանության ամբիոնի նիստին, 1947 թ. փետրվարի 22-ին:

² Ի. Ածոն. Արմենիա Յունականա. Ընթ. 1908, ստ. 165-172, Ժանապահ 165-171: Corpus iuris civilis, editio stereotypa quarta, volumen tertium. Novellae recognovit Rudolfus S. Hoeil. Berolini 1912, p. 235-239.

³ Արամը, ինչպես այժմ պարզված է, ուրարտական թագավոր էր ժամանակակից Ասորեստանի Սալմանասար III թագավորի (860-825), որը ծրագրել է ասորեստանյան առեգրություններում 860, 858 և 816 թ. թ. (Ե. Բ. Պոտրուսի Հայության պարբերությանը, Երևան, 1944, ստ. 86, 898).

կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Հստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցրուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ: Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարկմտիան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք:¹

«Խորենացու մոտ պահպանված ավանդությունը, որ հայոց սահմանաները նվաճումների շնորհիվ տարածվել էին մինչ Պոնտական հողերը և մինչ Մաֆաք-Կեսարիա և որ ամբողջ այդ տարածության մեջ հայերեն էին խոսում, ըստ էռելթյան, — ինչպես իրավացիորեն նշել էր Ն. Աղոնցը, — արձագանքներ են իրերի զրությանը Հուստինիանոսի էպոխայի, և ոչ թե հեռավոր ժամանակների մինչ Արամի ինչպես պատմիչն է պատկերացնում: Սա պարզ է այնտեղից, որ հիշյալ հողերի նվաճման կապակցությամբ Խորենացին հիշում է հայկական հողերի բաժանումը I, II, III և IV Հայքի, բայց համառորեն վերագրում է այն Արամի առասպելական ժամանակներին, չվստահելով այն լուրերին, որ պտտում էին կայսրության մասումն Հայաստանի նշյալ բաժանման իսկական ծագման մասին»:²

Ի գեպ, Հուստինիանոսի հիշյալ XXIX նովելլան պարունակում է տեղեկություններ նրա մասին, թե որ հողերից կազմվեց, այսպես կոչված, IV Հայքը Պոնտական դիոցեզի և թեմերի կազմի մեջ, որոնք ընդգրկում էին, ի միջի այլաց, և սատրապիաները:³

«Կազմակերպում ենք ևս Չորրորդ Հայքը (τετάρτην Ἀρμενίαν), որը մինչ այժմ դուրկ էր գավառական կազմակերպությունից: Բնակված լինելով այլ և այլ ժողովուրդներով, այն հայտնի էր այլ և այլ՝ մեզ համար օտար՝ հորջորջումներով—Շոփաննեն (Τέσοφανηνή), Անձիտեննե (Ανζητηνή), Շոփաննե (Τέσοφαնή), Ասսիաննեն (Աստιχηνή), Բալավիտեննե (Βαλαβιτηνή)—և սատրապների իշխանության ներքո էր գտնվում: Վարչապետական այս հորջորջումները հոսմայեցիներից չէր բխում և ոչ էլ մեր նախորդներից, այլ մտցրած էր այլ պետության կողմից: Այս իսկ երկրում մենք մտցնում ենք քաղաքացիական կարգ, նշանակելով այնտեղ քաղաքացիական վարչապետ և տալիս ենք Մարտիրոսաց քաղաքը (Մարտորուլտան) և Կիթարիս բերդը (Կիթարէծ): Այն վերաբերում է օրդինար գալառների շարքին, քանի որ այն մենք դարձրինք կոնսուլական»:⁴

Այսպիսով, ինչպես նշում է Ն. Աղոնցը, «Չորրորդ Հայքին անցան հինգ ինքնավար իշխանությունների հողերը. Ծոփանների, Անձիտենների, Շոփենների, Աշտիանների և Բալավիտենների գավառները կազմեցին միասին մի գավառ Մարտուրոպոլիս մայրաքաղաքով»:⁵ Իսկ Մարտուրուրոպոլիսը կամ Մարտիրոսաց քաղաքը, ինչպես պարզված է, դա՝ Տիգրան Ա-ի ժամա-

¹ Մավսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ . Վ. Աբեղեանի և Ս. Ցարութիւնեանի [«Պատմագիրք Հայոց» II, 1], Տիգ. 1913, էջ 46—47:

² H. Адоնц, оп. cit., 203.

³ Karl Güterbock, Römisch-Armenien und die römischen Satrapien im 4. bis 6. Jahrhundert, Königsberg 1900.

⁴ H. Адоնц, оп. cit., 168.

⁵ Նոյն տեղում, 278,

նակների Հայաստանի մայրաքաղաքն է, նույն Տիգրանակերտը, հետագայում Մայաժարկին—Թիարրեքիրը:¹

Ընդհանրապես նովելլան ընդգծում է, որ այն հողերը, որոնցից Զորբորդ Հայքը կազմվեց, մինչ 530 թ. գուրք էին զավառական կազմակերպությունից և բնակված լինելով այլ և այլ ժաղավորդներով՝ հայտնի էին այլ և այլ հորջորջութիւններով և գտնվում էին սատրապների իշխանության ներքո. իսկ վարչապետական այսպիսի հորջորջումը ոչ հռոմայեցիների և ոչ էլ նրանց նախորդների, այսինքն՝ հելլենների կողմից էր մտցված, այլ ավելի առաջ, հետևապես, պարզ է, պարսիկների կողմից:

Հուստինիանոս Արքայսեր XXXI նովելլայում նշած վարչական ռեփորտի հեռավոր արձագանքը մենք գտնում ենք, ի միջի այլոց, Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ հետեւյալ կտորում. «Ի Շոփաց մինչև ցքաղաքն Մարտիրոսաց և յաշխարհն Աղճնեաց արևմտեայ Զորբորդ Հայք»:²

Իսկ սույն կտորի գրեթե բառացի կրկնությունը տալիս է «Գիրք Թղթոց»-ի այն վարիանտը, որ մեզ հասել է Վրաստանի պետ. թանգարանի Արmenica հավաքածուի № 21 (= 1558) ձեռագրում՝ 1318 թ., ուր կարդում ենք. «[Ի Շոփաց աշխարհն] մինչև ցքաղաքն Մարտիրոսաց յԱղճնիս արևմտեայ Զորբորդ Հայք»:²

Այն գրությունը Հայաստանում, որ եղել է Հուստինիանոս II կայսեր օրոք, որոշ չափով արտացոլում է հիշյալ Հովհաննեսի կտորությունը. Դրասխանակերտցին, երբ խոսում է Մորիկ կայսեր միջոցառութիւնների մասին Հայաստանում վարչական նոր բաժանութեամեր կիրառելու ուղղությամբ. «Ապա կայսեր Մօրկայ ձեռներիցութեամբ իմ փոփոխութեամբ արարիալ անուանց աշխարհացն այնոցիկ, որ ի մերոյն Արամայ կարգաւ հղեալ էր... և Զորբորդ կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսաց պոլիս, այսինքն՝ Նիքորդ, Յուստիանունիստ, զնա գրէ ի գիւտն արքունիք»:²

Գեորգ Կյուղացին իր «Descriptio orbis Romanus» երկի մեջ Զորբորդ Հայքը VI դարում ներկայացնում է այսպիսի թեմերով.

«Եպարχία Ա՝ 'Արմենիա ձևականաց»

Ճաճիւման նաև բարձրութեամբ պատմություն

‘Արտամուսատան

ու կունականա

Խոսունական

Կաթարիզման

ու առաջարկան

Կաթարիզման

1. Հ. Մանանդյան. Տիգրան Բ և Հոռոմը, նոր լուսաբանությամբ ըստ ակզբաղբյուրների. Երևան, 1940, էջ 68—69. Նույնի Քննական ահսություն հայ ժողովրդի պատմության համար Ա. Ակզրից մինչև Արշակութիւնների հաստատումը Հայաստանում (66 թ. մ. հ.), Երևան, 1944, էջ 170—171, և այլրւ.

2. Ցովունուն. Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 18:

3. Լ. Մելիքսե-Եսկ. Новый вариант армянской «Книги посданий» и ученик Петра Ивера Иоанн Майдумский, վետհերէն, ուստերէն սեղմանեալ. «Вестник Гос. Музея Грузии» XI В, 1961, էջ 48:

4. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 69.

κάστρον Παλιός
κάστρον Ἀρδών
κλίμα Σοφήνης.¹

Սույն երկի մեջ Մ. Խորենացու հիշված «կղիմա» ների հետևյալ ցուցակն է ներկայացված.

κλίμα Ἀγενήτινῆς
κλίμα Διγηστινῆς
κλίμα Γραινῆς
κλίμα Βιλαβητινῆς
(*κλίμα Παλινῆς)
κλίμα Ὁρέωνινῆς
κλίμα Ἀστιανικῆς
κλίμα Μουζουρῶν.²

Չորրորդ Հայքն իր ստորաբաժնումներով հիշված է և VII դարի հայոց «Աշխարհացույց»-ի մեջ, որը Մ. Խորենացուն էր վերագրվում, մինչդեռ այն Անանիա Շիրակացու գործն է:³

Այս այս «Աշխարհացույց»-ի համապատ խմբագրության մեջ Չորրորդ Հայքը իր ստորաբաժնումներով ներկայացրած է այսպես. «Չորրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց. և գաւառք են ի նմա ութ. Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բաղանովիտն, Ծոփք, Անձիթք, Գորիք, Գեղիք: Եւ ունի Չորրորդ Հայք բերդս և գետ և լիրին և բիւրեղ: Ունի և երիս և հաւու, և ձկունս, և ի գագանաց զաւեւծ»:⁴

Նույն Չորրորդ Հայքը «Աշխարհացույց»-ի բնդարձակ խմբագրության մեջ ներկայացրած է այսպես. «Աշխարհ Հայոց. Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն, յերի բարձր Հայոց, Մելտինէ քաղաքաւ սահմանի ըստ մտից, և ըստ հարաւոյ՝ Միջագետովք, և ըստ ելից Տարօնով: Ունի գաւառու ութ. զԽորձայն՝ յելից հիւսիսոյ, ընդ որ իջանէ միւս Գայլ գետ առ Կողործերդովն. զՀաշտէնս, յորմէ բդիսն աղբիւրք Տիզրիս գետոյ. իսկ ի մտից Խորձայնոյ՝ է Պաղնատուն գաւառ, հանդէպ հոմանուն բերդով. և հանդէպ նորա ի հարաւ՝ Բալախովիթա գաւառ, և ի մտից նոցա Ծոփք, և Ոնձիթ գաւառ ի հարաւ, յորուն Ծոփք և Հոռէ բերդ. և ի մտից նոցա Դէզիկ գաւառ, յորուն բերդք Դասի և Քըրէկ և Սոլի, որոց հանդէպ ի հարաւ է Գաւրէգ գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յԵփրատ ի քաղաքն Լուսաթառին, և երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փօքը Հայոց, յելից Մել-

¹ H. Gelzer. Georgii Cyprii Descriptio orbis Romani [Bibliotheca Teubneriana], Lipsiae 1890, p. p. 48—49: Մենք, գմբախտաբար, ձեռքի տակ Հոներնք նորագույն հրամակությունը. Le Synecdemos d'Hérokles et l'opusculle géographique de Georges de Chypre, texte, introduction, commentaire par Ernest Honigmann, préface de F. Cumont [Corpus Bruxellense Historiae Byzantinae]. 1939 թ.

² Ibid., p. 49.

³ Արև զեմ տես. Յ. Ա. Մանանյան. Когда и кем была составлена «Армянская география», приведываемая Монсею Хоренскому. «Византийский Времениник», т. I (XXVI), М. 1947, стр. 127—143:

⁴ Գրք. դ-ր Ա. Աբրահամյան. Անանիա Շիրակացու Մտահապքությունը, Երևան, 1946, էջ 366.

տինէ, և ապա խառնի ի նա կաւեկաս, գալով ի մտից կուսէ ի լեռնէն, որ կոչի Զիգոն Վասիթէոն, և նախ քան զանգանել նորա յԵփրատ՝ խառնի ի նա գետն Կառամինոն, որ գայ ի Տորոս լեռնէ և ընկալեալ յԵփրատ գնայ ընդ հարաւ, հատանէ զիեառն Տորոս, յորում տեղուց գտանի ակն բիւրեղ. և ուսի Զորրորդ Հայր էրէս և հաւս և ի գազանաց զառիւծաւ:

Զորբորդ Հայքի հիշատակությունն առկա է, ի միջի այլը; և Ստեփանոս Սյունեցու (VIII գ.)՝ Դիօնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի»-ի մեկնության մեջ, որտեղ ժամանակի հայ բարբառների ցուցակն է ներկայացրած. «Եւ դարձնել զքո լիզուիդ զիտելն զրովանդակ դրառն զեղերականս, որպէս զկորմայն և զմայեցին և զթութայինն և զջորբորդ Հայեցին և զՍպերային և զՄիւնին և զԱրցախայինն. այլ միմիշայն զմիջերկրեայսն և զոստանիկն, վասն զի պիտանիք այտոքիկ ենք».² Ուրիշ խոսքով ասած, այստեղ հիշված է ութ բարբառ, որոնց ցուցակը այլ զասաւվորությամբ, այսինքն՝ արեելք-հարավ-արևմուտք ուղղությամբ՝ հետեւյալ պատկերն է տալիս. Արցախային, Սյունյաց, Կորճեքի, Խութայի, IV Հայքի, Սպերի և Տայքի, որոնցից առաջին հինգը արաբական խալիֆաթի գերիշխանության ներք գտնվող Հայաստանում, մինչդեռ վերջին երկուաը Բյուզանդական Հայաստանում, որտեղ հայության զգալի մասը քաղկեդոնականության ազդեցությամբ սկսել էր հունանալ և վրացիանալ:

Վրաց պատմիչ Արսեն Սափարացին (IX դ.) իր «Պատմություն ըստ ժանման Վրաց և Հայոց» երկում նշում է այս փաստը, թե ինչպես Ներսես Միջին կոչված կաթողիկոսի գումարած Դվինի ժողովից (554-555 թ. թ.) անմիջապես հետո տաճրուղ Քարթլին և Չորբորդ Հայքը հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրությունն առնելուց,՝ որը համապատասխանում է հայ մատենագրության մեջ մեզ հասած պատմություններին, որ եղեն ի Հայու ի սրբոյն Գրիգորէ մկնեալ անանուն հեղինակի գրվածքի հետեւյալ տողերին. «Ի ձեռն այսը ժողովոյ Վիլք և Չորբորդ Հայք որոշեցան ի Հայոց ձեռնադրութենէ»⁴

Զարբորդ Հայքի կացությունը VIII-IX դ. դ. պատկերելու համար կարեսը է հիշել, որ այն 702 թվից անջատվել էր Բյուզանդական կայսրությունից,⁵ մտնելով Արարական խալիֆաթի սահմանները:

995 Թիկն Զորբորդ Հայքում և սահմանակից գավառներում տեղի է ունենում մեծ երկրաշարժ, ինչպես մկայում է Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկն իր «Պատմութիւն Տիկերական»-ի 111 գրքի 36-րդ գլխում, որ «Յաղագս շարժման Զորբորդ Հայոց վերսագիրն է կրում. և ի ՆԽԴ թուականին շարժիցաւ երկիրը, բայց սաստկագոյնս աշխարհն Զորբորդ Հայոց, Հաշտեանք, Ալորձեան, Մոփը, Բայու և Պաղնատուննա»⁶

¹ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածով նախնեաց [հրատ. Սուբքիամ կ. Սիւկըռեան], Վեհականի, 1881, էջ 30.

² Н. Атонц. Иночиснй Флакийский и армянские толкователи. Спб. 1915, стр. 187.

³ Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 1, Երևան, 1936, էջ 39.

³ Καρωσάκεων ψ., Βρυσισαηέδημος Βαψίανηέξου οικισμού θεοηέρει από Αρτού Αγητούληη.

⁵ М. В. Лисиченко. История цыганщины. Краеведческий сборник. М.—Л. 1910. стр. 118.

⁸ Оваківський վարչապետի Տարրենցու Առողկան Պատմութիւն Տիգերական, աշխատ. Ա. Մալյասովն, Սպբ., 1885, Էջ 233:

* * *

Արաբների առաջացումը պատմության ասպարհում VII դարու կեսից և նրանց անշնչատ պայքարը բյուզանդացիների դիմ՝ Անբաժակով Արևելքին տիրելու նվազաւակով, որը առաջինների հաղթանակով վերջացավ, ի միջի այլոց, այն հետեանքը ունեցավ, որ Հայաստանի տերիտորիայի մեծագույն մասը VII—VIII դ. դ. Խալիֆաթի գերիշխանության ներքո անցավ:

«Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և գերիշխող գեր էին կատարում նոր աշխարհակալ պետության մեջ Ասորիքի արաբները, իսկ երկրորդ շրջանում կենտրոնը գտնվել էր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և գերազին գեր էին խաղում Իրաքի արաբները և մահմեդականությունը ընդունած պարսիկ ազնվականությունը»:¹

Սակայն Բյուզանդիայի և Խալիֆաթի միջև շարունակվող պայքարին մասնակցում էին և հայերը, որոնք քաղաքական պայմանների շնորհիվ երկու մասի բաժանված լինելով՝ գեպի մեկ կամ մյուս դրսի պետությունն էին ձգտում. ուստի և Հայաստանի գրությունը հաճախ երկդիմի էր դառնում: Այսպիսի պայմաններում միանգամայն հասկանալի է, որ «եթե նա (Հայաստանը) հավատարիմ էր մնում խալիֆայության՝ նրան անխնա պատճում էին հույները, իսկ եթե անցնում էր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները»²:

Հայերի բազմաթիվ ապատամբություններից արաբական տիրապետության գեմ «համագայային ապատագրական շարժման» բնույթ էին կրում 774—775 և 854—852 թ. թ. ապատամբությունները, որոնցից առաջինը նկարագրել է Ղեոնդը, իսկ երկրորդը՝ Թովմա Արծրունին:

Հայաստանի այլեալլ տեղերում Արդյան Արու-Զաֆարի օրոք ծագած ապատամբությունները արձագանք էին գտնել Արմենիում, Կարին, Արծնում և այլուր, ինչպես վկայում է Ղեոնդը («Պատմութիւն»):

Նույն Ղեոնդը («Պատմութիւն», գլ. 37) միաժամանակ մատնանշում է մի հանգամանք, որը փոքրիշատե թեթևացրել էր համաժողովրդական ծանր լուծը:

«Եւ յետ այսորիկ յաջորդէ զիշխանութիւնն նորա (Արգլայի) Մահմետ Մահադի որդի նորու Եւ սա էր ազնուական քան զնայր իւր և լաւագոյն բարուք, երաց զամենայն տունս գանձուց զորս աղխեալ պահէր ամբարիշտն Արդյա, և բաշխեաց պարգևս զօրաց իւրոց: Համարձակեաց և զդրունս մարդից հանել զվաճառականս ի գաճառս իւրեանց և լնուլ զպէտս կարօսելոց. և եղե առատութիւն երկրի, և զիւտ արծաթոյ ընդարձակիցաւ. և բնակչաց երկրի անդորրութիւն եղե ի հարկապահանջ բոնութենէն. զի թէպէտ և զանուր լծոյ հարկին ծանրացոյց՝ սակայն զասն զիւտի արծաթոյն հանգեաւ:

¹ Ակագ. Հակոբ Մանագյան. Ժողովրդական ապատամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դիմ. Երևան, 1939, էջ 5.

² Նույն տեղում, էջ 71.

³ Նույնը նաև՝ Համեն Հարությունյան. «Ասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը (պատմական տեսություն). Ասունցի Դավիթ, հոբելյանական ժողովածու, Երևան, 1939, էջ 245—263. Ա. Պողոսյան, Պատմական ակնարկ «Ասունցի Դավիթ» ժողովական էպոսի ժամանակաշրջանի մասին. Ասունցի Դավիթ 1000, Երևան, 1939, էջ 205—209.

երկիր առ փոքր մի ի չար տառապանաց վտանգին. քանզի և լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց առ ի հանելի ի նոցունց խանությարծաթոյ զոյ ի պէտս մարդկան յաւուր իշխանութեան նորաձ.¹

Հեռնդի վկայությունը, գծբախտարար, չի պարունակում կոնկրետ ցուցամունքներ Հայաստանի այն վայրերի մասին, որտեղ գտնվելիս են եղել արծաթի հանքեր և որոնք նյութական բարօրության աղբյուր են ծառայել հանքագործների համար, այն հողագուրկ հանքագործների, որոնց վրա ծանրացել էին արաբական զավթիչների հարվածները.

Մակայն այն, ինչ որ լուռթյան է մատնված Հեռնդի մոտ, լրացնում է VIII դ. ասորա-հակորիկ տարեգիր կեղծ-Դիոնիսոսի Թել-Մահացին, որը մանրամասն նկարագրում է Չորրորդ Հայքի Տուտիս կոչված վայրում 774—775 թ.թ. ծագած ապստամբությունը, երբ Մազինը անցավ Արդունով և Մայֆըրկաթով.²

«Արգուն»—«Արգոն»՝ գա, անկասկած, ասորական ձեն է այն գավառի անվան, որին արաբերնում համապատասխանում է «Արգան», հունարենում «Արձանենե» (Պորկոպիս Կեսարացու մոտ), յատիներինում «Արգանենա»—«Արգանիանա» (Ամմիան Մարցելինի մոտ), հայերենում «Արգու-Արգյուն» կամ «Արձն»—«Աղճնիք»:³

Ասորական ձեկ ներկայացնում իրենից և «Մայֆըրկաթ» քաղաքի անունը, որին հայերենում համապատասխանում է «Նփրկերտ», այսինքն՝ «Ֆարկին»—«Մայաֆարկին» կամ Մարտիրոպոլիս—Մարտիրոսաց քաղաքը (Martyropolis), երբեմ Տիգրանակերտը (Tigranocerta):⁴

Առանձին ուշագրության արժանի է կեղծ-Դիոնիսոսի այն ցուցմունքը, որ այն վայրը, որը ծագեց ապստամբությունը, գտնվում էր լեռներում, հյուսիսային շրջանում, որ կոչվում էր Տուտիս, որի ազգաքնակությունը բաղկացած էր ասորիներից և ուրտիացիներից, որոնք բաժանած ունեին այդ շրջանը, այսինքն՝ Չորրորդ Հայքը:

Մենք, գծբախտարար, զուրկ ենք հսարազորությունից որնէ բան ասելու Տուտիսի մասին, քանի որ չփատենք այդ անվան համանիշները հունական և հայկական աղբյուրներում, ևս առավել՝ նրա այն կամ այն կետի հետ ունեցած լոկալիզացիայի մասին:

Համեմատարար ափելի բարդ է խնդիրը այն ժամանակվա Չորրորդ Հայքի ազգաքնակության կազմի մասին, որն ըստ կեղծ-Դիոնիսոսի ասորիներից և ուրտիացիներից է եղել բաղկացած։ Սա նշանակում է, որ VIII դարում Չորրորդ Հայքի հայութունն արգեն նոսրացել էր, զուցեած չեացի էր, մասսաւր գաղթելով այլ տեղեր, ժամամբ էլ ձուլվելով շրջակա ազգությունների հետ։

¹ Պատմութիւն Հեռնդեայ մեծի գարզապետի Հայոց, երկրարդ տաղաքրութիւն, ՍՊԲ, 1887, էջ 164—165։

² Chronique de Denys de Tell-Mahre. Quatrième partie. Publiéée et traduite par J. B. Chabot Paris, 1895. թ.թ. 172—176 (208—212).

³ H. Gelzer. Georgii Cyprij Descriptio orbis Romani, p. 165. H. Hübschmann Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904, S. 249—250. Հ. Հրեզման. Հին հայոց անդամական, Վիճակն, 1907, էջ 167—169. Յ. Կանայեանց. «Անհայտ գավառներ հին Հայապատճենի», Վաշ, 1916, էջ 17—22։

⁴ Հ. Մանանցան. Տիգրան Բ. և Համբը, էջ 66—68. Նույնինի Քննական տեսությունն հայ ժողովրդի պատմության. I, էջ 170—173 և այլուր. «Էլիոթ», VII, 1908, թթ. 497—520։

Անկախ սրանից, ուրտիացիների պըռըլեմը հատուկ քննության արժանի է:

Խոսելով ասորական «Վարք Մարութա եպիսկոպոսի» (Վդ.) հռշաբձանի մասին, մենք դեռևս 1942 թվին նշել ենք, որ այս վարքը, «անկախ այն հետաքրքրությունից, որ նա գրավում է Մարութա (մար-Ռւթա) անվան ստուգարանության կապակցությամբ, հիշատակելի է այն աղբյուրների շարքում, որտեղ խօսվում է օտայցոց, հայերեն թարգմանությամբ ուսայեցոց երկրի մասին», որտեղից «Օտայ անուն քրմապետն... էառ իւր ի կուռքին զղուտը ուրում ի նախարարացն Հայոց՝ Մարիամ կոչեցեած» «Ամենայն կամկածից գուրս է, —գորում էինք մենք նույն տեղում, —որ այս հուշաբձանում հիշված օտայցոց երկրը ոչ մի կերպ չի կարելի նույնացնել էտիունի-Օտնեն-Ռւտիքի հետ, որ լավ հայտնի է աղբյուրներից, քանի որ այդպիսին կարծվում է Տիգրիսի շրջանում... և, հետեապես, օտայցիք այս գեպքում ոչ մի առնչություն չունեն ուսաբացիների կամ ուղերի հետաւ Ընդունին այապիսի եզրակացությունը բխում է, ի միջի այլոց, և այն միաստից, որ կեղծ-Դիոնեսիոս թել-Մահրացու ժամանակագրության մեջ ուրտիացիք ասորիների հետ միասին հիշատակված են իրքեւ բնակիչներ Տուտիսի շրջանի, որը Չորրորդ Հայքումն էր գանգում, և որոնք մահակից էին պարսկական (արաբական) բռնակալների դեմ ծագած ապատամբության²

Ուրտիացիների խնդիրը անկախ կեղծ-Դիոնեսիոսի տվյալներից, հատուկ քննության է ենթարկված մեծագույն հայագետ, Վիեննայի Միթրաբայան Հակովրոս վ. Տաշյանի կողմից, որը հարուստ պատմական աշխարհագրական ավյախների օգտագործուսով հետեյալ եզրակացությունների է հանգել.

«Դէռորդ կիպրացի գիտէ Եերկու ժողովուրդ, որոնց մին կը կոչուի Խութեցիք և միւսը Սանտանաք», նոյն միջոցին Ասորիք գիտեն և կը յիշեն ճիշտ Հանձիթի մեջ Ուրտիցիք ժողովուրդ մը (ասոր. Օրէյէ, յն. 'Օրտաօւ), ուստի «Որտ» ժողովուրդ մը, որուն համար բացայացաւ կ'ըստի թե հայերէնէ և ասորերէնէ բոլորովին տարրեր լիզու մը կը խօսէր տակաւին այն առեն: Աւելի ուշ այ՝ ևս աւելի անդին՝ Արաբացիք կը յիշեն Խութի մէջ (զորոնք նաև Թովու, Արծրունի, Պատմ., Ե., է շատ «խրթին» կը գտնէր և կը համարէր «Գոհեանք Ասորուց», որոնք Աղրամիեայ և Սանտասարեայ հնա եկած ըլլան, ուստի «Սանտանայք» կանուանուին ևն) կը յիշեն «Խութեցիք» (գրուած և Խովայթեցիք) բարբարոս ժողովուրդ մը՝ բնակած լեռնազաւափ մը մէջ՝ որ կը կոչուէր Էլ-Արբան, զոր Նէսումնէկէ լաւ ևս կը կարգայ Էլ-Ուրբայ (=ասոր. Օրէյէ). Տոմաշեկ («Սասուն և Տիգրիս աղբերաց սահմանները» ևն, թրգ. Հ. Բառն. Պիլէզիկնեան, Վիեննա, 1896, էջ 12, 28—29 ևն) միայն տարակուսական կը գտնէ թէ Հանձիթի «արամայիցիք» Ուրտեցիք մինչև Տարօն ու Բաղիշու կողմերը կրնային տարածուած ըլլալ ևն ևնչ ալ ըստաց, և նաև Ժ. դարուն կային Ուրտացիք կամ Ուրտացիք ինքնուրոյն լին գուաւ, զոր չեին հասկընար Հայք և Ասորիք և սորվիլ ստիպուած էին (Հմժտ. Nöldeke-ի, ZDMG, XXXIII, 163 ի.): հետեաբար ոչ հայ էին և ոչ

¹ Իմակատար վարք և վկայաբանութիւնց որոց, Ե, Վենետիկ, 1810, էջ 585—586:

² Լ. Մելիքստ-Բեկօվ. Կ իշուն սկան (Uica-Antiochaca). Գրւդն Տիլ, Գօս. Սունք., ԽХХІІ, 1942, սր. 46—47.

արամէացի ցեղով, թէև յետոյ հայացած ու ասորացած, բայց թերեւս աւելի քրդացած ըլլան։¹ Զիարդ և է, արդէն ենսէն այս Ուրտացիք կը կապէօ հին Ուրտարուի բնակչաց հետ, զոր Հիւրշման (անդ) «շատ անապահով» կը գտնէ։ Բայց այժմ նաև Մարքուարտ² ուղղակի մնացորդ կըսէ հին Ուրտարտեանց պետութենէ ետքը ցրուած՝ Հայոց մտնելով՝ նախին տիրող ժողովրդին և անունը հետեւապէս հին Ուրտարու անուան համառոտում մը՝ Որտ-, ինչպէս այս Ասորիսու, «Ուրտարտու», Դարեհի բարելական «Ուրտարտու» (ուղղակի Ուրալ տու) ունի ձեւերս ալ երբ. «Արարտու էլ (Հերոդ. Գ. 94, է. 79), «Ալարտու» և ի վերջոյ, հայ.՝ Այրարտու, Այժմ Կարստ (անդ՝ 411) կը գնոէ՝ այս տակաւին ժ. գարու ապրոյ Ուրտայեցիք միայն «սումբերամ ակիաւեան ցեղէ կրնան ըլլար», և այնպիսի տեղ մը (Անձիտ, Սառուն, Խույթ), ուր Սագասարի զրոյցի ասպարէզն էւ։³

Ի վերջո, մնում է նշել և մեկնաբանել մի կարեւոր հանգամանք Կեղծ-Դիոնեսիսի նկարագրությունից.

Կեղծ-Դիոնեսիսի ժամանակագրության տվյալների հետ ծանոթանալիս այն կետում, ուր խոսվում է Զորրորդ Հայքի Տուտիս կոչված վայրի հողագուրկ գյուղացիության ծանը տնտեսական դրության մասին, որն ավելի ևս բարդանում էր շնորհիվ տեղական կալվածատերերի հարստահարությունների և արաբական բռնականների կեղեքման և հարկապահնշման, որի հետեւանքով այդ գյուղացիությունը 774—775 թ.թ. ապստամբության ուղի էր ընտրել անելանելի դրությունից դուրս գալու համար, ակամա հիշում ես նույնպիսի գրությունների ժամկենների ժամանակից, ասել է՝ գրեթե 1000 տարի նրանից առաջ, որի նկարագրությունն առկա է Ապողոն Ռոդոպուսցու (III դ. նախ քան մեր թ.) Argonautica-ի մեջ (II, 1000—1008). Նշելով, որ աշխատավոր խալիբները՝ բնակվելով դաժան և ժայռոտ երկրում՝ գրադվում են երկաթի մշակումով, հույն հեղինակը գրում է. «Նրանք (խալիբները) չեն զբաղված ոչ հողի մշակումով եղների օգնությամբ, ոչ էլ անուշ պտուղների բուծությամբ (պտղաբուծությամբ), և ոչ էլ հոտեր են արածացնում ցողավիտ արտավայրերում, կոտրելով երկաթածին պինդ հողը, նրանք փոխանակում են արդյունահանված երկաթը կենսամթերքների վրա. նրանց համար երբեք չի ծագում արշալույսը առանց նոր աշխատանքի. սև մըի ու ծուխի մեջ նրանք կատարում են իրենց ծանը աշխատանքը»։⁴

* * *

Զորրորդ Հայքի Տուտիս վայրում 774—775 թ.թ. տեղի ունեցած դեպքերի նկարագրություններ մենք բերում ենք Կեղծ-Դիոնեսիսի թեր-Մահրա-

¹ Հիւրշման. «Հին Հայոց տեղույ անունները», էջ 54—55 կը յիշէ Տեմորի յիշատակած Բալիկի ցեղէ ևն Սանոթ. Տաշունի:

² J. Marquart, Armenische Streifen, Յուշարձան, էջ 292—302; Մանոթ. Տաշյանի:

³ Հ. Յ. Տաշեան. Հին Հայոստանի արհմանաւ սահմանը Փոքր Հայք և Կողազնէն (Սնբատաթա). «Հանգէս ամսորեայ» 1940, թիւ 1—6, էջ 4—5:

⁴ В. Латышев. Scythica et Caucasicca, I. 413—414 Հմմտ. II, 204 (Ապողոնի մեջնիշը): «Նաև» «Վետնիկ արքաների» 1947 թ., № 3, стр. 281, 289:

ցու «Ժամանակագրության» հիման վրա, որ երկիցս հրատարակել է ֆրանսիացի արևելագետ J. B. Chabot-ն:¹

«Ժամանակագրության բնագիրը, որը սխալմամբ ասորական-հակորիկ պատրիարք Դիոնիսիոս թել Մահրացուն էր վերագրվում և այս պատճառով կեղծ Դիոնիսիոսի անունով հոչակվեց Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum), իսկապես մեզ չի հասել, այլ նրա փոխարեն առկա է անանուն ժամանակագրությունը, որ իրոք Զուկոնինի վանրի մի ունի վանականին է պատկանում, և կազմված պիտի լինի հունական տոմարի 1086 թվին, այսինքն՝ մեր թվականության 775 թվին»²

774—775 թ.թ. ապստամբության նկարագրությունը մենք բերում ենք մեր թարգմանությամբ՝ համաձայն J. B. Chabot-ի առաջին հրատարակության (1895 թ.):³

Պ. 172 [208]... Երբ խղճուկները տեսան, որ այս բացահայտ թալանը չի դաշտառում, որ [այս հարկանավաքները] չունեին ոչ ամոթ և ոչ երկյուղ աստծուց, որ բոլոր թշվառությունների նախապատճառը հաշիվ չէր պահանջում նրանցից այն չարագործությունների մասին, որ նրանք շարունակ կատարում էին երկրում, ապստամբեցին: ԵՄԵՆՔ տալիս էինք, — ասում էին նրանք, — և մեզ և մեր հարեւանների համար. մենք վճարում էինք մեր հարկը և նույնիսկ այն, որ մենք չպիտի մուտքինք: Այս երբ պիտի կշտանան նրանք մեր մովի ՄԵՆՔ այլևս ոչինչ չենք տա, քանի որ չփոտենք՝ մատողից վերցնենք, որպիսզի տանք»:

Երբ կուսակալը այս լսեց, նա խիեց բռունցքով, կրծացրեց ատամներով և՝ նմանվերով առյօւծին՝ արյան ձարավ զպաց: Նա (կուսակալը) հավաքեց նրանց (խղճուկների: Լ.Մ.-Բ.) զիմ քաղաքի բոլոր ոճքագործներին և մարդասապաններին: Նա ուղարկեց իր աեղակալին՝ հանդիրձ հանցագործ և արյունածարավ մարզկանցով, երերի մեծամեծներով և գարշելի ու անգութ զյուղացին: Բոլոր վել ջիւս (տեղակալը) կազմեց համագյուղացիներից մի բազմամասող զորք, զինված նիզակներով և պարսատիկներով, և գնաց նրանց դիմու Գյուղ սցիւները իրենց կողմից մեծ վնաս պատճառեցին բոլոր մարդասապաններին և գողերին, որոնք նրանց միջև էին գոնվում, և նրանց հարազատներին այնպիսի չարիք հասցրին, որ լեզուն ի վիճակի չէ այն նկարագրելու:

Իսկ այն տեղը, որտեղ խռովություն առաջացավ՝ զանգում էր լեռներում, հյուսիսային շրջանում, Այն կոչվում էր Տողովուրդը բաղկացած էր ասորիներից և ուրտիւցիներից, որոնք բաժանած ուղարկած էին իրար միջև այս շրջանը, այսինքն՝ IV Հայքը:

Պ. 173. Այս իսկ շրջանում զանգում էր մի վայր/որտեղ արդյունահանվում էր կապար, արծաթ և այլ երկաթահանքանյութ: Մեծ աղետը, որը տարածվել էր ամբողջ այս երկրում, պատճառ եղավ նրա, որ մարդիկ

¹ Chronique de Denys de Tell-Mahré Quatrième partie. Publiéée et traduite par J. B. Chabot [«Bibliothèque de l'École des Hautes Études», fasc. 112]. Paris, 1895. Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum, ed. J. B. Chabot [«Corpus scriptorum Christianorum orientalium, Scriptores syri. Series tertia, t. II»], Parisis, 1933.

² Н. В., Пицундская-Византия и Иран на рубеже VI и VII веков. М.-Л. 1946, стр. 43—44.

³ Chronique de Denys de Tell-Mahré etc., pp. 172—175 (ըստ ասորական ձեռագրի 206—212):

արամէացի ցեղով, թէս յետոյ հայացած ու ասորացած, բայց թերևս աւելի քրդացած ըլլան։ Զիարդ և է, արդէն Ենսէն այս Ուրացիք կը կապէօ հին Ուրարտուի բնակչաց հետ, զոր Հիւրցման (անդ) «շատ անապահով» կը գտնէ։ Բայց այժմ նաև Մարքուարտ² ուղղակի մնացորդ կըսէ հին Ուրարտեանց պիտութինէ հետք ցրուած՝ Հայոց մտնելով՝ նախկին տիրող ժողովը դեմքեան և անունը հետեապէս հին Ուրարտու անուան համառօտում մը Որտու, ինչպէս այս Ասորեստ, «Ուրարտու», Դարեհի բարելական «Ուրաշտու» (ուղղիկի Ուրալ տու) ունի ձեւերս ալ, երբ. «Արարտ» էլ (Հերոդ. Գ. 94, է. 79), «Ալարու-ք» և ի գերջոյ, հայ՝ Այրարտու, Այժմ Կարստ (անդ՝ 411) կը գնոէ՝ այս տակաւին ժ. գարու ապրող Ուրտայեցիք միայն ըսումներան ականատեան ցեղէ կրնան ըլլալ», և այնպիսի տեղ մը (Անձիտ, Սասուն, Խույթ), ուր Սագասարի զրոյցի ասպարէզն է։³

Ի գերջո, մնում է նշել և մեկնարանիլ մի կարեռը հանգամանք Կեղծ-Դիոնեսիոսի նկարագրությունից.

Կեղծ-Դիոնեսիոսի ժամանակագրության տվյալների հետ ծանոթանալիս այն կետում, որը խոսվում է Զորբորդ Հայքի Տուտիս կոչված վայրի հողազուրկ գյուղացիության ծանր տնտեսական դրության մասին, որն ավելի ևս բարգանում էր շնորհիվ տեղական կալվածատերերի հարստահարությունների և արարական բռնակալների կիղեքման և հարկապահնանջման, որի հետեանքով այդ գյուղացիությունը 774—775 թ.թ. ազգատամբության ուղի էր ընտրել անելանելի դրությունից դուրս գալու համար, ակամա հիշում ես նույնպիսի գրությունը հանքագործ խալիբների ժամանակից, ասել է՝ գրեթե 1000 տարի նրանից առաջ, որի նկարագրությունն առկա է Ապողոն Ռոդոսացու (III դ. նախ քան մեր թ.) Argonautica-ի մեջ (II, 1000—1008): Նշելով, որ աշխատավոր խալիբները՝ բնակվելով զաժան և ժայռու երկրում՝ զբաղվում են երկաթի մշակումով, հույն հեղինակը գրում է. «Նրանք (խալիբները) չեն զբաղված ոչ հողի մշակումով եղների օգնությամբ, ոչ էլ անուշ պտուղների բուծությամբ (պտղաբուծությամբ), և ոչ էլ հոտեր են արածացնում ցողազետ արտօտավայրերում, կոտրելով երկաթածին պինդ հողը, նրանք փոխանակում են արդյունահանված երկաթը կենսամթերքների վրա. նրանց համար երրեք չի ծագում արշալույսը առանց նոր աշխատանքի. սև մըի ուծուիսի մեջ նրանք կատարում են իրենց ծանր աշխատանքը»:⁴

* * *

Զորբորդ Հայքի Տուտիս վայրում 774—775 թ.թ. տեղի ունեցած դեպքը նկարագրությունը մենք բերում ենք Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրա-

¹ Հիւրցման, «Հին Հայոց տեղուոյ անուննեցը», էջ 54—55 կը յիշէ Տելուրի տիտանակած Բալիկի ցեղէ ևն Մանող. Տաշանի.

² J. Marquart, Armenische Streifen, Յուշագծան, էջ 291—302; Մանող. Տաշանի:

³ Հ. Յ. Տաշան. Հին Հայտատանի արեմական սահմանը Փոքը Հայք և Կողոպենէ (Սնբատակայ). «Հանդէս ամսօրեայ» 1940, թիւ 1—6, էջ 4—5:

⁴ В. Латышев. Scythica et Caucasica, I, 413—414 Հմմտ. II, 204 (Ապողոնի մեկնիքը): Նաև «Вестник древней истории», 1947 г., № 3, стр. 281, 289:

նում և ձյունի մեջ գցում թե նրանց և թե նրանց գույքը, կանանց և երեխաներին հալած վողները գողում էին, ընդունելով, չորհիվ զաման ցրտի, աղի անկիսդան գեղին գույն, իսկ հալածողները՝ շնայելով նրանց մերկացնում էին տղամարդկանց, կանանց և երեխաներին, զցելով նրանց մերկ՝ առանց հագուստի և կոչկեցնի Նրանք (հալածողները, Լ.Մ. Բ.) նույնիւկ հանուս էին նրանցից (հալածվրդից, Լ.Մ. Բ.) վարտիկները, չվախելով մերկացնել նրանց սեռական [օրգանները], նրանք (հալածողները, Լ.Մ. Բ.) անամոթ կերպով ըռնարարում էին կանանց և գուստըներին՝ գուստըների և կանանց սեռկայությամբ նրանց գլուխ կանքնած անզգամը կարգադրեց, որ որեւ մեկի կողմից հափշտակվածը իրեն է պատկանում Այսպես որ՝ թե ինքը անզգամը և թե նրա հատ միացած ավագակները կարող էին կատարել և բավարարել իրենց մոլեկին և ագան իզները:

Գյուղացիները և նրանց պարագլուխները ավելի անողորմ երեա-

[211] ցին, քան հեթանոսները | և ոչ մի կարեկցություն չցուցաբերեցին հանգեպի իրենց եղբայրների, նենգորեն վերաբերվելով գեպի ամենքից հարզված անձնավորությունները: Այս ավագակապետները ոչնչացրին մարդկանց անտեսության բոլոր առարկաները. այրեցին ամբողջ փայտեղենը, ջարդեցին կափե բոլոր ամանները, զավթելով պղնձե և երկաթե բոլոր իրեղենները: Նրանք չխնայեցին ոչ անկողին, ոչ գուներ, ոչ անոթներ, ոչ լագաններ, ենթարկելով այն ևս հրի: Նրանք փշրեցին սափորները, զինու ամանները, կաթսաները, կուժերը: Խմելով այս անոթներից որքան կարելի էր, հապա թնացածը նրանք ամբողջութին թափում էին հողի վրա ևսկ եթե ամանը հողումն էր թաղված և հնարավոր չեր այն կոտրել, նրանցից մեկը՝ վերցնելով սիդակը՝ տակը ծակում էր և զինին թափում էր հողի սեջ: Նույնը նրանք կատա-

[Պ. 175] բցին և մեղրի նկատմամբ. ուսում էին որքան կարող էին |, իսկ թնացածը գետնի վրա էին թափում: Նրանք ջարդեցին մեղվափեթակները և թափեցին այն գեպի ջուրը, ուստի և բոլոր մեղուները կոտորվեցին: Նրանք համարձակություն ունեցան կատարել այս սատանայի գրդամբ, որը նրանց գծագրեց ուզին, որի չորհիվ նրանք իրենց միջև եղած հեթանոսներից վատթար եղան: Նրանք համարձակվում էին ուտել միս և պանիր սուրբ պահոց օրերին և կատարեցին բազում այլ անօրեն գործեր: Այսպես որ, եթե մեզ լուր հասավ նրա մասին, թե ինչ կատարեցին նրանք իրենց հարազատների հետ, մենք մեծ վշտի մեջ ընկանք, սկսեցինք լալ և մեծ անհանգստություն զգացինք, տեսնելով թե որ աստիճանի կարող է սատանան գայթակեցնել մարդկանց:

Նրանք համարձակվեցին նույնիսկ ոտնձգություն անել եկեղեցու նկատմամբ, որը նրանք կողոպաեցին: Նրանք հափշտակեցին եկեղեցական զրբելը և աստվածաշտոթյան բոլոր իրեղենները: Քանի որ նրանք իրենց կանանց փակել էին եկեղեցում, հեթանոսները հենց իրենք ներս էին խուժում այնտեղ և բռնարարում կանանց տաճարների միջ, եվ ահա այստեղ պետք է լալ երեմիայի հետ միասին և ասել... |

[212] Նկարագրած աղետները տեղի ունեցան այս վայրում: Նրանք քշե-

ցին, կանանց, որոնք մարդասպանների պես շղթայված էին, հավաքեցին ամբողջ տափար-ոչխարը և հետը տարան Նրանք այսպիսով անցան բազյաթիվ գյուղերով, քշելով գյուղացիներին, կողոպտելով և իրենց հետ տանելով բնակիներին:

Ռազինը անցավ Արզունով և Մայքերկաթով և՝ տեսնելով այս քաղաքների կուսակալների ավազակարար գործերը՝ գատապարտեց Նրանց մեծ կտուանքների և անգութ տանջանքների, այնպես որ նըրանք որդերից կրծուտիցին և այնպես մեռան Նա կալանջներով կոտրատում էր Նրանց ձեռները և ոտները ու խլից նրանցից նրանց բոլոր կողոպտածւ:

Աստված հանձնեց Նրանց այս անողորմ անդգամի ձեռքը, և Նրանց կատարած բոլոր զարշելիությունները իրենց իսկ վրա դարձան: Սրանց մասին ասում էին, որ նրանք բուռում էին փողոցներում անմորում երիտասարդներին և բռնարարում նրանց: Անաստված գրադիրները և գրամափոխները, չնայած որ քրիստոնյաներ էին, հարկադրում էին բռնիլ և իրենց մոտ բերել ինչպես դեռահաս օրիորդներին ժողովրդից, նույնպես և ազնվատոնմ անձանց գուստըններին, և բըռնարարում էին նրանց...

Եվ այսպես նաև նկատելով նրանց վատ գործերը՝ հրամացից բերել իր մոտ, ծակոտել ոնդները և ուղարկի պես զսպել Նա ծակոտել տվեց Նրանց ճակատները, վրան տախտակներ կախելով, տվեց նրանց շղթաներով կապելու, որ և քարշ պիտի տային իրենց ետելից...

... Ապա Նրանց հանձնում էին ծառայի, որը ծաղրի առարկա էր դարձնում նրանց՝ քաղաքի հրապարակի վրա, որից հետո Նրանց բանուը զցկցին: Նա հացը տալիս էր Նրանց այն քանակով, որ բավական լիներ Նրանց գոյությունը պահպանելու համար: Նրանց բանտարկության տուն տեղերից նեխման հոտ էր ելնում՝ գերեզմանի գարշահոտությունից էլ վատիթար:

Եվ այս փաստերից մի քանիսը ես նշեցի Նրա համար, որպեսզի վարչապետնելը, ծանոթանալով սրանց հետ, վարչեին [ժողովրդի հետ] ըստ խղճի, չմոռանալով աստծուն, որպեսզի Նրանք չվարչին կամայականորեն՝ ազնվության հակառակ, գիտենալով, որ կա օրենք նույնիսկ Նրանց համար ովքեր օրենք են հրատարակում, և որպեսզի Նրանք հասկանան, որ սան ձարձակորեն վարվող իշխանավորը արագորեն կորցնում է իշխանի կոչումը, որը Նրան փառքի է հասցնում, և ստանում է բռնակալի կոչում, որ լի է խելառությամբ և օրը սկիզբն է լինում լսելագարության...

Լ. Մ. Մելիքսետ-Բեկ

К истории крестьянского восстания в IV Армении в 774—775 гг.

Резюме

Коснувшись деления Армении первых веков до и после н. э. на Большую и Малую — согласно анонимной армянской „Географии“ VII века, приписываемой Монсею Хоренскому, а Малой Армении,

в свою очередь, на 4 кантона — согласно XXXI повелле императора Юстиниана II от 536 г. и „Истории Армении“ Моисея Хоренского (I, 14), автор настоящей статьи, оперируя данными „Descriptio orbis Romani“ Георгия Кипрского от VI века и вышеупомянутой „Географии“ VII века (как теперь полагают, Анания Ширакского), пытается выяснить картину административного деления и этнического состава т. н. IV Армении, отправившей в 702 г. от Византийской империи.

Путем сопоставления затем данных из „Истории халифов“ армянского историка VIII века Гевонда или Леонтия (гл. 37) о народных восстаниях в Армении 774—775 гг. с аналогичными сведениями, содержащимися в анонимной сирийской „Хронике“ от 775 г., известной обычно под именем Хроники псевдо-Дионисия (Chronicon apoputum pseudo Dionysianum vulgo dictum), по имени сиро-яковитского патриарха Дионисия Тель-Маирейского, о крестьянских восстаниях в те же годы в местности Тутис, что в IV Армении, населенной сирийцами и уртийцами (отдаленными потомками ур[ар]тийцев?), в статье дается попытка изложения одного из эпизодов классовой борьбы в условиях феодализма на территории IV Армении во 2-й половине VIII века.

Это — ярко выраженное крестьянское восстание, вызванное тяжелыми условиями малоземелья и безземелья в одном из горно-скалистых районов Армении, известном богатыми залежами руд, которые местные жители-крестьяне добывали с применением самых отсталых и примитивных технических способов для обмена на жизненные припасы, при жесточайшей (и двойной) эксплуатации со стороны как местных землевладельцев собственников, так и органов государственной власти (арабского халифата?), сумевших в конечном счете подавить это восстание.

К статье прилагается перевод описания обстоятельств и картины восстания 774—775 гг., сохраненного в сирийской „Хронике“ псевдо-Дионисия Тель-Маирейского (как теперь полагают, вышедшего из-под пера некоего монаха Зукгинского монастыря), от 1086 г. греческого счисления или 775 г. н. э., согласно публикации французского ориенталиста J. B. Chabot, ссылку на которую читатель найдет в соответствующих подстрочных примечаниях данной статьи.

Համ
32/7



ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



FL0649546

[104]

4пм
3217